

սափած, ապուշ կարած, կորագլուխ և զղջացնին իրենց շարամառութեան վերաբ:

— Ա. Գրքի մի փայտ բազում՝ ցնծառցէ հուր, իսկ ուր ոչ իցէ բարկութիւն, անդ լոհալ է կախի, խօսքերը պյապէս է բացասաքել հայրեցից մէկը, կրակի, բոցի պատճառը փայտի շատութիւնն է, եթէ փայտ վմինի, կրակը կը հանգչի այսովէս են և ախտերը, ով որ ախտերի պատճառը կարէ, կը վերջանան և ախտերը, անտառակութեան մի պատճառն էլ փարթամ ուտել խմելն է, քնից յափրանան է, պարապ մնան է, զատարէ խօսակցութիւնն և փափուկ հաղնելն է:

— Ամէն բանի մէջ մենք պէտք է դատենք և մեղագրենք մեր անձը, այն ժամանակ հանգիստ կլինենք, այդ է ճշմարիտ ճանապարհը քրիստոնէի:

— Առ կրօնաւարը նման է կաւեղէն անօթի, որ գեւս կրակի մէջ չի ըսկեւ, եթէ նրա մէջ ածես դինի, ձէթ, իւղ են, կը բայց քայու է և միջ կ եղածը կը թափուի բացց կրակի մէջ թքեւուց յետոց՝ կրգիմանաց, պյապէս էլ երիտասարդը տակաւ առ տակաւ պիտի իրեն պատրաստի տակունութեան: Մարմնի և հոգու կրակի բոլից անցնելն է աշխատութիւնը և ժուժկալութիւնը, շափառութիւնը կանոնաւորում է մարդու ուտելու, խմելու գործարանները հեռու է պահում մարմնական և հոգեկան հիւանդութիւններից, սրում է ուղեղը փարթամութեան ադանդի գոլորշներից, աւելի պայծառանում է աշքերի սրատեսութիւնը, ցամաքում է խուլը, որն աւելի խմեչքներից է գոյանում. այդպիսով մարմնը թեթեանալով, ոչ ցողնում է և ոչ հիւանդանում, շատ է ապրում:

— Սիրոյ նշանները սրանք են, ցանկանալ խոնել իւր սիրելիի վրայ, շատ անգամ յիշել նրան, առանց ձանձրանալու ձառապէլ նրան, անձը ու կայքը չխնայես նրան զանել, զգուշանալ նրան վերաւորելուց, եթէ ուրիշն սկզբանած լինի, աշխատես հաշտեցնել նրա հետ, ցաւակից լինիս նրա վշտի ժամանակ, ցաւել նրա հեռանալու վրայ, սիրել նրա սիրելիներին, ջանալ հաճոյանալ նրան, վախենալ նրան գերը չգալուց, գրաւել ուրիշներին, որ նրան սիրեն, նրանից ստացած պարգևներն ուրիշն չտալ, նրա խրաներին հաւանել, համարձակ յուսով խնդրել նրանից, ինչի որ պէտք ունիս:

— Լու է մի տուն սաղմաս ասես հասկանալով, ըմբռնելով, քան թէ հազար առն առանց հասկանալու և միտքը քննելու:

— Կրօնաւորի մեծ պարծանքը աղքատութիւնն է *:

Նիկողայոս արեղայ 8. Աւետիքիանց



ԲՐՈՅՑԱԿԱՆ ՎՃԵՌՆԵՐ

(Fried. Wagner)

Հերանուական եւ յրիստոնէական բարոյականութիւն. Քրիստոնէական բարոյականութիւն գերազանցուն սկզբունքն է կամքի բարութիւն, հեթանոսականներնը կամքի կրովութիւն; Տակայն այս չի նշանակում, իբր թէ այստեղ կրովի կամքը և այստեղ ըարի կամքը անտարբեր կամ անյայտ բան է. այլ թէ քրիստոնէական բարոյականութեան մէջ «զօրեղութեան» չափը երկրորդական է համարւում «բարութեան» չափի հանդէպ, և թէ հեթանոսական բարոյականութեան մէջ հակառակ չափն է տիրում:

Բայց և այսմէս սրտի բարութիւնն ու բարը ուր գործելու ձգտումը քրիստոնէի աչքում առաջին առաքինութիւնն է միւս առաքինութիւնների մէջ և զիսաւոր պյաման բարոյական հաւանութեան համար: Խոկ ընդհակառակ հեթանոսաբար մտածողը ամէնից աւելի նշանակութիւն կու տայ ուժին և կրովութեան, այն ևս հուսաբարպէս, արգեօք լա՞ թէ վատ նպատակների համար գործածուի: Հետեապէս քրիստոնէակար խորհուց առաջ բարձր բարի բոյլ կամքը թողութեան կարմառանաց, խոկ զօրեղ՝ բայց թոյլ կամքը ողութեան ոչ մինչդեռ հեթանոսը վերջնը կը գերադառ առաջնից աւելի:

Թէպէտ այս երկու կարգի գնահատութիւնը չեն ստեղծուել հեթանոսական և քրիստոնէական կրօներից, այլ այնչափ հին են, որչափ բարոյապէտ զատելու մարգկային սպարութիւնը. սակայն մինը կարող ենք որպէս հեթանոսական ոգուց ըլլիսած անուանել, իսկ միւսը՝ որպէս քրիստոնէական ոգու ներգործութիւն կոչել որովհետև առաջին այնտեղ է իշխում, երկրորդն այստեղ:

* Արժ. Տ. Նիկողայոս արեղայի «Ճաղկաբարը» կարծում իմ շահ համելի և մատէլի կիմի մեր յահանակութիւն և հասարակ ընթերցողների համար, ուսի եւ այս միրի սպառուերց յետոյ, որ մի յանի համար կշարուակութիւն կաշառականին ծաղկաբարներ անել նշանաւոր հեղինակների և բարոյախօսների երկիրից:

Ամբ.

Դատաստանի կամ արդարութեան առաջ, ինչպէս և կրօնական լոցի առաջ, հարկաւ միշտ առելի կշխու է ուսնիցի կամքի բարութեան չափը: Բայց մարդկանց բարերի մէջ, որամադրութիւնների, հակումների համակրութիւնների և առ հասարակ այս բաններից կախաւած անձնական կարծիքների և գատաղութիւնների մէջ՝ մինչև ազգ որ շարաւանկ կենդանի են մնում երկու անունկ համարումները, անդադար իրար մէջ են խառնըլում և կցորդվաւում, ուստի և շատ անգամ գժուար է ինում մնջ շրջապատող մարդկանց և իրանց գործքների մասին միակերպ կարծիքները Աշան զի իւրաքանչիւնի իւր բնութեան համեմատ առելի այս կամ այն կողմը կը հակաւի Ով որ առելի կամքի ոյժ ունի, նու այդ յատկութիւնն էլ ուրիշների մէջ առելի բարձր կը դառէ, իսկ սրոնց առաւելութիւնը սրտի ջերմութիւնն է: Առքա մարդկանց մէջ ես նու և առ աջ կը նայն: Թէ ինչ է նոյց սիրար: Խնկով որ սովոր է առելի առարկայական հայեցակետով տեսնելու և զննելու աշխարհը ուրիշն բանաստեղծներն ու արուեստագէտները կամ առահասարակ գեղազոխութեամբ զգացողները, նորա գնարձեալ աւելի զերադառում են կամքի ոյժը, քան լոկ միայն անոր բարութիւնը, վասն զի նորա այն շնորհաւում, թէ մարգս ինչ տեսնեի է պատկանում (չար է թէ բարի), այլ թէ իւր առանկի մէջ որչափ կատարելութեամբ է բացուել և ծաղկել:

Դիմակ և բնաւորութիւն: Յայտնի է, որ կեանք իւր շատ անդամ «բնաւորութիւն» են անուանում, երբ որ ուզում են մէկի վիճակը պարապմունքը կամ դասակարգը յայտնել: զիւուորի փաստաբանի, վաճառականի, գարընի բնաւորութիւն: Այս գաղափարանների նոյնացումը անշուշտ այն ենթագրութիւնց չե ծագում, թէ մարգիկ վիճակ են ընտրում իրանց բնաւորութեան համեմատ, այլ ինձնուած է փարձով ճանաչած այն ճշշդ գալուզութեան լերայ, թէ շատերի բնաւորութիւնը կազմում է իրանց ընտրում վիճակավ, սրավէնեաւ իրանց կազմելու իրանց ներքին մզումները հարկաւ բնարած պարապմունքի կողմն են հակվում: այս բանի վերայ յետոյ առելանում է ամբողջ միջավայրի հաւասարեցուցանող գրոշմն ու ներդրութիւնը, որ ամենայն դասակարգի կամ առանձանի յատկութիւն է կազմում: Ով որ ենէ ինքնուրայն յատուկ մզումներով օժտուած մինչի, նորա բնաւորութիւնը հէնց ոկզրից այն չափը անսրբուշ թոյլ և փափոխական կը լինի, որ միայն յետոյ կը կազմակերպուի այս կամ այն ընտրած ճիշտական մզումներուն է մնում և որոնք մինչաւ կազմութիւնը համար անառանիկ են իրանց բնաւորութեամբ, իրար արդէն օժտուած են մնում անհատական ինքնուրայն հակումներով, ուրեմն ի ընէ առելի բնաւորութիւն են ունենաւում: քան սրոնք զիւուորութեամբ են յարմարանում: Այդպիսիք մի ելք ունին. կամ բացէ-իրաց ընդգիմանալ փափոխաւթեան փարձերին և առելի իւրեանց անհատական ինքնատիպ բնաւո-

ուզգութեւն և ձե կը ստանայ: Ծատ սակաւ մարդկի առաջուց այնքան բնաւորութիւնն ու ունենաւմ, որ ոչ թէ պատահական բախտի տակ ճկվում և պատշաճանում ենր ոչը ընդհակառակ ամէն բանի լուծին ներգործարաք կամ կրառութար ընդգիմանում են, իսկ եթէ առերեւ-թարէս արաւարուստ ընկննի նու, գարձնեալ իրօք անփոփոխ են մնում ի ներըուստ և իւ- բեանց ընակից մզումները աւելի ևս գորացնում և բարգաւաճութեամբ են:

Այժմ ինքնին հարց է ծագում, արգեօք մարդու մարքն ու գործքերը իւր բնաւորութեան պատուց են թէ ընաւորութիւնը գործքերի ար- դիւնք է: Տարակոյն չկացի որ մարդու մէջ եր- կուան էլ կատարվում է, այսինքն թէ ընաւո- րութիւնն ու վարքը վոխագարձարաք իրար մի- թայ ազգուամ են: Եւ այս գէպում վարքի ներ- գործութեամբ հատ հարգկանց հակումները վախովախում են շատ զանազան ատամնանուկ, վան սրոյ ընաւորութիւնը գործքերի արգեւնք է գառանաւմ մէկի մէջ պակաս միւսի մէջ առելի չափով: և ընդհակառակ ընաւորութեան նախնական կամքը մի մարքու վարքի վերաց առելի գորա- թիւն է ունենաւմ: քան միւսի կեանքում: Այն- ակ ուրեմն ընաւորութիւնը առաւելապէս ըր- նածին է, այսուղ առաւելապէս ստացական է:

Արդիմն իսկապէս առնելով սիսաւ չէ այն կարծիքը, թէ ընաւորութիւնը կարելի է կրթել, թէ ապաքէն այդ ենթադրութեան վերայ է հիմ- նուած գաստիարակութեան յոյսը կամ թէ զա- նազան վիճակի, գտանքը և մարմինների անդամ գառանալու հնարաւորութիւնը: Սակայն այսպիսի փորձերը յաջողութիւն կարող են ունենաւ միայն այն գէպերաւում, ու ը որ կամքի նախնական ուղ- գութիւնը այն միարանութեանց մէկի կամ միւսի սկզբունքներին համաձայն է ընթանում: բայց այն ժամանակ այցպիսի ազգեցութեամբը ընաւորութիւնը ու թէ փոխում է: այլ զօրանուում: որոշ- վում և ձեւանում է: Մանաւանգ որ այս գէպ- քում ձգտում կայ ոչ թէ անհատական բնաւո- րութիւն կազմելուն, այլ հանրական կամ տի- պարական ընաւորութիւն ընդունելու, այսինքն այն որ համապատասխան վիճակի կամ պարապ- մունքի որոշ կենքն ունի: Իսկ որպէս միերայ որ ջանքը ընկերների համար անառանիկ են իրանց բնաւորութեամբ, իրար արդէն օժտուած են մնում անհատական ինքնուրայն հակումներով, ուրեմն ի ընէ առելի բնաւորութիւն են ունենաւում: քան սրոնք զիւուորութեամբ են յարմարանում: Այդպիսիք մի ելք ունին. կամ բացէ-իրաց ընդգիմանալ փափոխաւթեան փարձերին և առելի իւրեանց անհատական ինքնատիպ բնաւո-

բութեամբ զօրանալ, և կամ իւրեանց նախնաշկան անհատականութիւնը կոտրել և յամենայն զէպս ընկերների բնաւորութիւն սահնակ Հարկաւ այս վերջինը մեծ մասով չի յաջողվում. սահացած բնաւորութիւնը լոկ դիմակ է գառնում է կամ եթէ երկրորդ բնութիւնը միշտ ի ներքուստ կրմըստանայ, և ուրեմն այն ներքին երկպառակութեան հետքերը երբէք խսպառ չեն ջնջուի

Նորոց ծնունդ. Տշմարտապէս նորոգ ծնուելու համար հարկաւոր է ոչ թէ մի յաղթութիւն գործել, այլ մեր ներքին բնութիւնը ապասել այն սխալ պահնանջներեց որ աշխարհք առլորութիւնները մեր առջնն են զնում և մինք էլ անմուռնչ ընդունում ենք, որպէս բարոյական պատու էրները Ռւրեմն այստեղ յաղթող է հանդիսանում ոչ թէ պարաւորութեան զգացումը, այլ պարտութիւն է կրում սխալ պարտաւորութիւնը, որով և նորոգ ծնվում ենք Մեր ամէն տեսակ վատթար հակումներն և մանք անձնապաշտուկան շարժառ իթները, որոնք մեր բնաւորութիւնը միշտ և հանապազ աղաւազում և մեր հոգին ճնշում են, մի և նոյն ժամանակ պատճում են գառնում, որ մեր մէջ սկսում է իշխել թիւը պարտաւորութեան զգացում։ Աւմ մէջ որ արտաքին պահնանջները հաշտ և հաւան են ներքին կարքիներին և պիտոքներին նա կարող է պարտաւորութեան զգացում չունենալ, կարօա չէ այդ բանին։ Բայց հէնց այդ պատճուով մեր բնութեան աղնուաշոյն բաժինը կը փրկուի և նորոգ կը ծնուի, երբ որ այն աւելորդ պահնանջունքների լուծը թօսթափուի

Օրինաւոր եւ ամբարոյական բաղդամիլի սահմանը, Քրիստոնէութիւնը մարդկութեան վարդապետեց, թէ մեր հոգու մէջ ուրիշ բարոյական զօրութիւններ ևս կան, քան լոկ միայն մտաւոր զուարձութեան պահնանջն և անձնապաշտութեան նրբագոյն ձեռքբարը, որով նախնեաց վիճակայութիւնը կամինում էր իշխել բիրտ բարձանեների և մուլութիւնների վերայ կրօնական հայեցողութիւններով զարթուցանելիք աւելի բարձրագոյն հակումները ուրիշ խորհուրդ չպէտք է ունենան, բայց եթէ անձնասիրական, ցանկական կամքը յաղթահարելու Խոկ որովհետեւ անհարին է այս վերջինը խսպառ սպանել, առանց նոյն իսկ կետնքը ոչնչացնելու, ապա ուրեմն հարկաւ ըընորական և ապարդիւն պիտի լինի այն ամենայն ջանքը, որ աւելի հեռու է ձգտում, քան ճնշելու միայն վնասակար և անբարոյական բաղձանքը, Բայց արգեօք անմեղ և վնասարեց ցանկութեանց մէջ սահմանը որտեղ գծուի, այս մատօին քրիստոնէական վարդապետները երբէք բացայտաւ և որոշ չեն խօսել, Եթէ ուղենանք քաղցրութիւնը

վայելումը՝ որպէս մտրդու բացարձակ ժայրագոյն ցանկութիւնը որոշել լոկ ներելի չափով բազանքը գորացնելուց, այն ժամանակ կարելի է առարկել, թէ անհնարին է քաղցրութիւնը անջատել կարքիքի տուշորումը մեղմացնելուց կամ դադարեցնելուց, որը օք. ծարաւի սոսկ պապակը կարելուց, և ուրեմն անհարելի է որոշել, թէ այդպիսի գէպքում արգեօք քաղցրութիւնը մարգու ուղած մոլի ձգտում է գառնում, թէ առանց ուղենալու ինքնին մէջը խառնվում է։ Ուլ որ կերակուր է առնում, նո իւր սովը յագեցնելով՝ մի և նոյն ժամանակ քաղցրութիւն է վայելում, բայց և այնպէս այս կարքին լուսմն տալը չպէտք է նախատուի, որովհետեւ հարկն այդպիս է ստիպել։ Ուրեմն ինքն բատ ինքեան քաղցրութեան ձգտմամբ՝ ոչ մի բաղձանք անբար բոյական չի դառնույց։ Այլ եթէ մէկը իւր փոքր աւելի է լցում, քան որչափ որ սովը պահնանջում է, այնպէս որ նա քաղցրութեան ճաշկալումը միակ շարժառիթ է գարձնում, այդպիսի յանկութիւնը միայն համարում ենք զորա մէջ պարսաւելի։ Բայց ինչո՞վ է զանազանվում այսպիսի մերժելի քաղցրութիւնը անմեղ քաղցրութիւնց։ Պարզ է, որ երկուսն էլ նոյն բնութիւնն ունին, միայն թէ աենջանքի ատիճանը զանազան է։ Անշուշտ խտրութիւնը ծագում է ներդործութիւնից չափով վայելումը պահնապանութեան մսանում և զօրացնում է գործող ոյժերը, որ նոյն է թէ բարոյական ոյժերը, իսկ չափազանցութիւնը թուլացնում է սոնոնք, և ահա այսպիսի փորձեց կազմվում է մեր դատավճիռը.

Ճգնաւորները սխալ կերպով ըմբռնեցին այն սահմանը, որ կայ օրինաւոր բսա որում կարեւը և չափազանց պիտոցների մէջ, և նոքա վերջինների պէս տռաջններն էլ հալածեցին և արմատով չնշել ուղեցին։ Նոքա նուազագոյն չափի վերածեցին կեանքի պահնապանութեան համար անհրաժշտ կարեւոր պիտոցները և այդ բանով իւրեանց փիզիքական ոյժերը թուլացուցին. իսկ մի քանի կարքիներն խսպառ ճնշել փորձեցին, նոյն իսկ հոգեկան վայելքները աններելի համարեցին, որով վնասուցին իրանց ներքին աշխարհի նաև այն զօրութիւնները, որոնց վերայ որ հիմնուած են մարդու մաքուր հակումները։ Մենք այսպէս տեսնում ենք, որ չափազանց ժուժկալութիւնը նոյնափ վնասակար կարող է լինել, որչափ և մոլի ցանկութիւնների շուշպառութիւնը։

Քաղձանքներից յաղթութիւնը միայն այն գէպքում օրինաւոր սկզբունք կարող է գառնալ, երբ որ փորձով և խղճով բարուոք ճանաչուած չափ է պահնապանվում, ուր հարկաւ առաջննաշակութիւն պիտի ստանան բարոյական և կրօնական հայեցողութիւնները կամ կարքիների բնական զօրութիւնը։

Եղբայրի պատուեցի Նթէ սէրը ծագում է այն բանի ազգմամբ և խմացմամբ, ինչ որ մէկը մեզ հետ հաւասար հասարակութեամբ ունի, որով մենք նորան նման և համասեռ ենք հանդիսանում, ապա ուրեմն հնարաւոր պիտի լինի խրատով և որ մեր մէջ սէր զարթուցանել և եղբայրի թեան պատուէը այնուհեաւ հակասական գաղափար չի լինի, ինչպէս որ ոմանք կարծում են, իբր թէ սիրել ընկերը շատ անգամ նշանակում է սիրել ատելի արատները: Միայն հարկաւոր կը լինի, որ սովորութիւն ստանանք իւրաքանչիւր մարդու մէջ միմիսոյն այն բանի վերայ միտ գնել և այն աչքի առաջ պահել, ինչ որ նա մեզ հետ հաւասար նմանութեամբ ունի, նոյնպէս և անփոյթ թողնել այն ամենայն, որով որ մենք նորանից խտրութիւն ենք կազմում: Ի հարկէ այս բանի համար յատուկ ատաղանդ պէտք է ունենալ, բայց և այնպէս, թէ և շատ անգամ գժուար է, ոչ ոքի համար անհնարին բան չէ այդ գործը. որովհետեւ շատ ու քիչ բանով իւրաքանչիւր մարդուն նման ենք, գէթ այն հանգամանքով, որ ամէնքս էլ մարդ ենք:

Հարկաւ մենք չենք կարող կամաւ խափանել, որ չտեսնենք այն ամէնք, ինչով որ ուրիշը մեզանից խոտորվում է և ինչ որ այդ պատճառով մենք ատում ենք. բայց եթէ այն պատուէը և պատուէր կատարելու իզձը մեր մէջ կենդանի լինի մենք միշտ կաշխատենք այդպիսի զարտուղութիւնները երկար զիտելու գէպիերեց իրոցել և աւելի և աւելի սովորութիւն գարճնել միշտ վառ պահել մեր մաքում միայն նմանութիւնները և առհասարակ մեր ընկերների ուրիշ ամենայն սիրելի յատկութիւնները, որով այնուհետեւ համապատասխան գործք և վարք ու բարք լոյս կու գան:

Բայց այժմ ի՞նդիր է զառնում, արգեօք ոէրն իրօք ուրիշների հետ նման լինելու իմանալով է ծագում: Վէթէ չե՛պատահում, որ մարդուն սիրենք այնպիսի յատկութեան պատճառով, որ հէնց մեր մէջ չի գտնվում: Եւ ընդհակառակ՝ միթէ չե՛նք կարող ատել մէկին, որի մէջ նշամարվում են հէնց մեր ունեցած յատկութիւնները: Երգեօք նախանձողը միշտ նախանձողին է սիրում, կամ մեծամիտը՝ մեծամտին: Եւ առաջնորդը պէտք է ատէ աննախանձն: իսկ երկրորդը՝ համեստին: Անհաւանական չէ, թէ իւր ընկերի մէջ ոյնպիսի արատ նշամարողը, որ ինքն էլ իւր մէջ ունի, հէնց այդ պատճառով համակրական աչք նորա վերայ. իսկ եթէ մէկին աղատ գտնէ այդ արատից, նորանից իւր երեսը կը գարճնէ, որովհետեւ նորա առաջ նուռատացած կզգայ իւր անձը: Այն առածը, թէ «ոք նմանին» միաբանին՝ կամ «նմանն զնմանն սիրէ», ճշմար-

տանում է ոչ միայն ընտրեալ գերազանցների մէջ, այլ և հասարակ մարգիսանց կեանքում: Իսկ ուր որ հակառակ ներգործութիւն է նկատվում, այն ի՞նչպէս պէտք է մեկնուի: Նթէ ես մէկին սիրում եմ մի բարեմասնութեան պատճառով, որից որ ինքս զուրկ եմ, մի խօսքով այն պատճառով, ինչով որ նա ինձ նման չէ, այս գէպում սիրոյ հիմքն ի՞նչ է կազմում: Ակնյացանի է: որ ես այն յատկութիւնը արգէն կանխաւ սիրել եմ: կամ ուրիշ մէջ տեսնելով, կամ ու abstracto—վերացական գաղափարով. իսկ այս բանն էլ հնարաւոր կը լինէր միայն այն գէպում: եթէ իմ մէջ այն բանի տրամադրութիւնը եղել է ի բնէ: թէպէտե թոյլ աստիճանով, այնպէս որ այն ինձ համար կարօտելու և անձկալու իղձ է գարճել: Բայց այս նշանակութիւն է: թէ այդ գէպումն էլ սէրը մի ուրիշ անձի ինձ հետ ունեցած նմանութեան ծանօթութեան վերայ է հիմնուած: և ուրեմն իմ սրտի պահանջ է այն նմանութիւնը:

Ճշմարիտ վարդապետուրին բարոյականութեան. Նթէ ումանք մարգկային բնութեան մէջ ամենայն արգարութեամբ զանազանում են՝ կեանքի մէջ գործելու և կեանքի քաղցրութիւնները վայելելու կարիքները, և առաջնորդ համարում են բարոյականութեան արմատ, իսկ երկրորդը անքարոյականութեան դուռ, այդ այն նշանակութիւն չունի իրը թէ քաղցրութիւն նաշակելու հակումները պէտք է ընկնուին կամ բնաջնջ լինին, այլ այն միայն, թէ անոնք պէտք է ծառայեցնել գործելու պահանջներին ուրեմն պէտք է լոկ միայն ստորակարդել վերջնների ներքոյ: Անոնք պէտք է միայն այնչափ լրամն ստանան, որչափ որ այդ բանը օգտաւէտ կարող է լինել ներգործական հակումների շահերին. մինչև անդամ բարոյական պատճուէր է: որ առողջութեան և զօրացման համեմատ անպատճառ անոնց լրումն տրուի: Բարոյականութեան մաքուր և զպղտորած վարդապետութիւնը միայն այն է պահանջում: որ Գործելը միշտ ամէն պատճուէրների գերագոյն սկզբունք գառնայ և ոչ թէ Քաղցրութիւն նաշակելու ծառայութեան կոչուի:

Ընդհակառակ անբարոյական սկզբունքների կամ մոլար վարդապետութեանց յատուկ գրոշմն այն է, որ քաղցրութիւն վայելելը կամ ինչպէս որ աւելի յարմար են զատում ատել, հաճութեան և զուարծութեան գդացումները՝ հաշակում են որպէս գործելու նպատակ կամ շարժառիթ, որով բարձանքներն այլ ես ոչ թէ ներգործական հակումներին են սպասաւորում: այլ առոնք անոց արբանեակ են զառնում: Այս սկզբունքը հացնուում է կամ միայն գէպի անձնասիրական գործունեութիւն, կամ, եթէ քաղցրութիւնը հնարաւոր մինի նաշակել առանց մատի ծայլը շար-

ժելու, նաև դէպէ մի վիճակի ուր որ մարդս ընաւ թողնում է տոկունութիւնը, այսինքն ուր ոք նա անշարժութիւնից լճանում է:

Եսկ քաղցրութեան ճաշակման բոլոր կարեների խաղառ ընկնումը կամ ընաջինջ առնելը նախ անհնարին բան է և երկրորդ՝ վնասակար է բարյական հակումներին, վասն զի իր թուլացնէ զլանալով հարկաւոր սնունդը: Խնդն բոտ ինքեան մի ուղղ սկզբունքի այսպէս ծայրացել չափականցութեամբ գործածութիւնն է ո ճշնաւ սրների սխալը:

Աւրեմն ճշմարիտ վարդապետութիւնը պահանջում է բաղդանքները տիրապետել, և ոչ թէ մեռցնել, և անոնց թշնամի է հանդիսանում միայն այն դէպէրում, ուր որ անոնք խոչընդոտ են գառնում և նուազեցնում են ներգործական հակումների կանանաւոր պաշտօնն և տուղջութիւնը:

Ո՞ւ յէ բախտառորդիան մցիլ: Եթէ մենք ի նկատի առնունք, թէ ինչպէս ընութիւնը ամեն նեւին փոյթ չունի մարդու բարեկցութեան և բախտառութեան մասին, հապա մենք պէտք է հասկանանք, թէ երկրի վերաց մեր կոչումը այն չի կարող լինելու որ բախտաւոր լինիլու, և թէ սխալ է բախտառութեան ցանկութիւնը՝ մեր ըուլոր գործոց ակրող խթան գարձնել:

Մանաւանդ որ տիեզերքը ընթացքն և իրար քանչիւը մարդու կեանքը կարծես թէ մեզ քար բազում են որ պէտք է հրաժարունք բախտառութիւնից և թէ մարդկային կենաց խորհուրդը այն է, որ խոր թափանցենք այդ հայեացքով և ըստ այնմ ապրինք:

Արդարեւ այդ բանից անբաժնն է և այն կարծիքը, թէ ուրեմն մենք ծնուած ենք շարշարուելու համար. վասն զի բախտից միշտ և անդադար հրաժարումը անհնարին է առանց ցաւերի: Բայց մի և նոյն բան է ուսուցանում մեզ և այն ըմբութի կեանքը, որ չի կամենում հապատակութի այդ վիճակին: Բախտառութեան ծգառումը ծուզում է ցաւերից, կարօտութիւններից որոնք ոչ մի բախտառութեամբ չեն ծածկում: սատցած բախտը ցնդվում է խոկոն, հենց որ կշառանում ենք, իսկայն կորցնում ենք ունեցածը. ուստի և նորից սկսում է տենչը և հետը գալձեալ զրկողութեան նոր զգացումը, այսինքն նոր շարշարական կութիւն ենք կոչում և որ աւելի աւելին է և ոչ թէ այնպէս անցաւոր:

Եւ իրաք չարչարանքից փախչելու ջանքը՝ նոյնափ զուր վաստակ է, սրչափ և բախտառութեան ձգառումը. կամ թէ երկուսն էլ խոկապէս նոյն են: Բնութիւնն էլ հաւատարապէս զգուշացնում թէ մէկ և թէ միւս գաղափարից, որ և անդադար մեզ զգացնել է տալիս, թէ ինքը սարչարանքների գէմ բոլորովին անտարբեր է:

Բայց բնութիւնը ուրիշ բան էլ է սովորեցնում: այն է, թէ մենք կանք և ենք բան անելու, գործելու, ստեղծելու, կհամք տալու համար: Թէպէտ այս էլ չարչարանքով է կատարվում, բայց մէջտեղից բառնում է ուրիշ շարշարանքները. բնութիւնն ուրիշն մի և նոյն ժամանակ սովորեցնում է չարչարանք տանելը: Եւ ինչո՞վ է սահապում մեզ գործելու, ի հարկէ, հէնց նեղութիւններ կրել տալով: Առանց այս բանի՝ գժուար թէ մենք շարժառէնք և եռանձնով յարատենք գործէնքն որ մանաւանդ որ անդործութիւնը նեղութիւն է մեզ համար, ուստի և միշտ գրգուում ենք գործելու: Ապա ուրեմն ընութեան վերջն էլու նաբատակի այն չէ, որ մեզ շարչարէ, այս կը լինէր անխօրհուրդ անպիթութիւն: Ընդհակառակ չարչարանք կրել տալով սովորեցնում է մեզ գործէլ և այնու ծառացել անյայտ՝ կամ լոկ միայն ազդամամբ զուշակելի՝ նպատակներին: Հէնց որ մենք մեր գործերով ուղարկուում ենք մեր գործերութեան մասակառակառակ, մեր անձնական նպատակներին ծառայել ընութիւնն իւր ընթացքով խափանում է մեր ծրագիրները և մեր վաստակը դրավատակի է գարնաւում: Աւրեմն մեր կօչումն է և այս քարոզում են մեր կեանքն փորձերը հազար լեզուներով—ոչ թէ այն, որ բախտաւոր մինինք, այլ որ գործենք և ստեղծագործենք, առանց բախտառութեան փոյթ ունենալու:

Սակայն ընութիւնը մեզ մասամբ վարձատարում է այն բանի փախարէն: ինչ որ մենք անտրատունջ հապատակութեամբ տուժում ենք: Մենք միայն այն դէպէրում կը կարողանանք հրաժարաւիլ բախտից, կամ որ նոյն է արտաքին նիւթական բարեկներց, եթէ մեր մէջ կենդանի լինին այլ կարիքներ, այլ խորհուրդներ, որոնք մաքուր սրաով կամենալու և գործելու համար կարող են մեզ զօրութիւն տալ: Բայց այս նշանակում է, թէ մեր մաքի մէջ արդէն փայլած պետի լինի գաղափարական վեճը բարեկների դերադոյն արժէքն ու կշիռը: Հէնց որ մեր գործոց խթան են գառնում ոչ թէ նիւթական՝ այլ հոգեկան հանդամանքներ, մեր զգացական կեանքը, մեր հաւատառութեանց մըթնուորը բացէիրաց փոխում է և նոր կարդեախտառութեան է ու թէ այնպէս անցաւոր:

Բարյական ճշմարտութեանց խարիսխ, Ամենայն կրօնական և փելքախարական բարյականութիւն հաւատարապէս կոչումն է անում մարդկային հոգու մաքրագոյն՝ ոչ քաղցրութիւններին և ցանկականին ուղղուած հակումներին: Եյդ վարդապետութիւնները մարդուն շրջապատում են այնպիսի պատկերացումներով խորհուրդներով և

մասածութիւններով որոնք զօրութիւն պիտի ուշ նենամն մեր ընութեան այդ կողմբ զարթուցանելու, որոնք կարիք պէտք է ծնանեն միջտ վեհմ կերպով վարուելու, առանց օգուտ և կամ հաճութիւն ստանալու ակնկալութեան: Եյտպէս մտածողի մէջ զոր օր հերոսի պատիերը եղձ պէտք է շորժէ, որ ինչն էլ այդպէս մարդ դառնայ, այդպէս պիտի գործքիւ կատարէ, այն ևս ոչ թէ փառքի կամ որեւէ շահի համար, այլ միայն այն պատճառապէտ որ իւր հաւանածն այդ բանն է, որ գիւցադնական յատկութիւններն իրան անկեղծ ուրախութիւն կը պատճառէն, երբ որ իւր գործքիւրում յայտնապէս երեան դան:

Հաջկաւ այնպիսի բարոյախօսութիւններ ևս կան, որ մարդկային անխտիք բոլոր գործաւնէութիւնը լոկ հաճութեան շարժառութով ծագող են համարում, սակայն այդպէս վարդապետովներն էլ վերջ ի վերջոյ սախալվում են զանազանել բարձր և ցածր հաճոյցներ կամ բարձանցներ, և ըստ այնմ մինն աւելի գոմելի համարելու քան միւսը, զոր օր. Խպիկութը հոդերոյ հաճոյքը բարձր էր գառում, քան մարդնաւոր զաւարմաւթիւնը: Քայց հենց այս հանգամանքով յայտնի է գառնում այդ վարդապետութեանց սկզբանըների անմիաբանութիւնն և թիւր հետեւ թիւնը, վասն զի եթէ մարդկանց հակումների մէջ խարսութիւնը լոկ աստիճանական համարենք և ոչ թէ արմատական, այնուհետև մեր բարոյական պատուէրները կամայական կը լինին, քանի որ մի մարդու զգացածը երբէք այն սաստիկութիւն և այն առարկան զօրութիւն չի ունենայ, ինչպէս որ ուշըին է զգում: Ինչ որ բախաւառը թիւնը քարոզող փիլիսոփայութիւնները բարձր կամ աղնըրագոյն հաճութիւն են համարում, վերջ ի վերջոյ ոչ այլ ինչ է, բայց եթէ մեր վերը յիշատակած մարզուը և անշահատէլ հակումների աղգումներց բղխող՝ երջանկութեան զգացումը, որ մեր ընութեան մէջ կայ: Արեմն բոլոր փիւլեստիայութիւնները այսպէս կամ այնպէս խառավանում են, թէ մարդու մէջ իդէալական ձգումներ կան, որ պէտք է անշէջ պահպանել:

Քայց լ'նչպէս գանազաննեք այն պատկերացումներն ու մասածութիւնները, որոնք այդ հակումներն են շարժում, միւսներից, որոնք լոկ ցանկական մասն են շօշափում: Քանի որ մի և նոյն առարկան կարող է զրգուել թէ ցանկական և թէ գործնական հակում (զոր օր, տիբանալու տենց, բայց և լոկ միայն ձգում), որ առարկան հիացմամբ զնուուի, ընդօրինակուի կամ նմանագործուի), ապա անցուշա ամենայն առարկայ զանազան կողմ ունի, որոնք իմանալի են դառնում մարդուն: Եւ իրօք ամենայն իրի մէջ, մինի ընութեան թէ մարդկային արտագրութիւն,

միշտ երկու կողմ կայ, որոնցից իւրաքանչիւրն առանց միւսի թէպէտ անմասձելի է մեզ համար, բայց զատ զատ իմացվում է մեր գիտակցութեան մէջ: Առհասարակ այդ կողմնը մենք զանազանում ենք նիւթ և Զե անուններով, բայց աւելի լու է աւել Բնագրով և Ներոյթ: Երդ ամենայն առարկայ կարող է ազգել մեր ներոը իւր գրոշմով, այսինքն իւր հոգեկան կողմնի այսինքն մարմնական կողմով: Վերջին կարգի ազգումը շօշափում է ցանկական, բաղձական կարելքը, իսկ առաջինն ընդհակառակ գործելու, խորհելու, զննելու արամադրութիւնը, առաջինն ուրեմն գոյացնում է կրաւորականութիւն, երկրորդը՝ Ժրութիւն: Ներգործականութիւն: Մի իրի եղէ ալական կողմն էլ անշուշտ կարող է անմիջական հաճութիւն պատճառել, բայց այս հաճութիւնը ուրիշ կարգի է, նոր տեսակի բերկութիւն է, որովհետեւ ընակական կողմից չի ծագում: Ուստի այս վեճակը, որ մենք հայեցողական կարող ենք կոչել, ցանկական վիճակի համեմատութեամբ՝ մի նոր ձեր ժրութիւն և կենդանութիւն է:

Եյս իրողութիւնը թէ ամենայն առարկայից մարդու բանականութեան հազարդվում է երկու առարեր ազգումն, որոնցից մէկը, այն է իրի եղէ ալական կողմը, արդիւնաւորական է, ժըրութիւն զարթուցանող է, իսկ միւսը՝ ցանկականը՝ կրաւորական վիճակ բերող է, ասում ենք այդ իրողութիւնը մի և նոյն ժամանակ հաստատ հաւաստիք է, թէ ինչ որ մենք կոչում ենք իր ընականութեական կողմը, այն մի անկախ: Սաեղագութակործող և կհնդգանի զօրութիւն է ամենայն մարմնի մէջ: Եւ այս հաւատը, այս համոզումը, թէ իրօք կայ մի գերբնական կամ ընազանցական զօրութիւն, որ ամենայն կենդանութեան արարչագործ հիմք է կազմում, խարիսխ է ամենայն կրօնական և բարյուական սկզբունքների: Որոնք աշխարհում տեսական նշանակութիւն են սատցել և արգիւնաւոր են հանգիստացել: Բարյուական վարդապետութեան էտիկան սկզբունքն է, որ այդ հշմարտութիւնը դառնայ մարդկային գործոց խթան:

U. U.

